

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2008 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կրթության և գիտության նախարարության գործունեությունն իրականացվել է պետական ռազմավարական փաստաթղթերի՝ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության գերակայություններին և ուղենիշներին, ինչպես նաև կառավարության գործունեության ծրագրին համապատասխան:

Կրթության բնագավառում նախարարության գլխավոր խնդիրն է կրթության բոլոր մակարդակներում որակի բարձրացումը՝ ապահովելով քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Այդ նպատակով, համակարգում իրականացվող բարեփոխումները զնալով ավելի ընդարձակվում և խորանում են՝ ընդգրկելով կրթության բոլոր ոլորտները:

Կրթության բնագավառում գերակա հանդիսանում է հանրակրթությունը՝ որպես երեխաներին ինքնուրույն կյանքի և հետագա մասնագիտական կրթության նախապատրաստման հիմք: Հանրապետության հանրակրթության համակարգը ներկայացված է 1410 պետական և 56 ոչ պետական հանրակրթական հաստատություններով, որտեղ 2008 թվականին սովորել է համապատասխանաբար՝ 408267 և շուրջ 6000 աշակերտ, դասավանդել՝ համապատասխանաբար՝ 40790 և 918 ուսուցիչ: «Աշակերտ/ուսուցչական դրույք» հարաբերությունը կազմել է 14.54՝ 2007թ. 14.03-ի դիմաց, դասարանի միջին խտությունը՝ 20.95, ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը պահպանվել է՝ 22 ժամ:

Հայաստանի հանրակրթությունն արտասահմանյան զարգացած երկրների կրթական համակարգերի հետ համադրելի դարձնելու նպատակով շարունակվել է 12-ամյա կրթակարգի և միջնակարգ կրթության պետական կրթական չափորոշիչները. շարունակվել են բնագիտամաթեմատիկական առարկաների չափորոշիչների տեղայնացման աշխատանքներն ըստ առանձին դասարանների, մշակվել են 8-9-րդ դասարանների «Առողջ ապրելակերպ» դասընթացի հայեցակարգը, չափորոշիչն ու ծրագիրը: Լրամշակվել ու վերահրատարակվել են «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի 5-6-րդ դասարանների դասագրքերը: Մշակվել են նաև «Մայրենի», «Մաթեմատիկա» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաների մեթոդական ձեռնարկները:

12-ամյա կրթակարգի ներդրման վերջնական փուլը կսկսվի 2009 թվականից՝ 3-ամյա ավագ դպրոցի ծրագրի ներդրմամբ: Այս տեսանկյունից հանգուցային է առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումը, ինչը հնարավորություն կտա հաղթահարել ավագ դասարաններում այսօր առկա հիմնախնդիրները և ապահովել սովորողների լիարժեք պատրաստվածությունը՝ իրենց նախընտրած մասնագիտությամբ ուսումը շարունակելու համար: 2008 թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը»: Այս ուսումնական տարում ծրագրի փորձնական փուլը սկսվել է 10 դպրոցում. դրանցում իրականացվել են հիմնանորոգման և գույքային

համալրման աշխատանքները, ուսուցիչներն անցել են հատուկ մասնագիտական վերապատրաստում: Ծրագրի սկզբունքներին համապատասխան՝ լրամշակվել են ավագ դպրոցի «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզուներ», հասարակագիտական և բնագիտական, «Ինֆորմատիկա», «Ֆիզկուլտուրա» և «Նախնական գինվորական պատրաստություն» առարկաների չափորոշիչներն ու ծրագրերը: Փորձնական ծրագրի նախնական արդյունքները վկայում են ծրագրի արդյունավետության և նպատակայնության մասին: Ծրագրի ամբողջական գնահատումը կիրականացվի 2008-2009 ուսումնական տարվա ավարտին, ինչի հիման վրա կընդլայնվի առանձին գործող ավագ դպրոցների ցանցը: Հանրակրթության որակի բարելավման, ինչպես նաև համակարգի առաջանցիկ զարգացման կարևոր նախապայմաններից է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներմուծումը հանրակրթական դպրոց և դպրոցների համալրումը ժամանակակից համակարգչային միջոցներով: 2008թ. «Համակարգիչների շահառու հիմնադրամում» ընդգրկված դպրոցներին տրամադրվել են 1135 համակարգիչ և այլ համակարգչային սարքավորումներ: Ստեղծվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը, և կազմակերպվել են առաջին փորձնական դասընթացները: Ներկայումս «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում» ընդգրկված է 324 դպրոց (ընդհանուր առմամբ, ինտերնետային կապով ապահովված են 365-ը): Նախատեսվում է, որ առաջիկա տարիներին հանրապետության բոլոր դպրոցները կմիանան այս ցանցին: 2008 թվականին մշակվել և հանրակրթական դպրոցներին է ներկայացվել «Հայոց լեզու 7-9 դասարանների համար» համակարգչային ուսումնական ծրագրային համակարգը՝ լազերային տեսասկավառակների միջոցով: Հանրապետության 785 դպրոցում հիմնվել են էլեկտրոնային գրադարաններ: Իրականացվել է «ՀՀ Սյունիքի մարզում հեռահար ուսուցման ներդրման պիլոտային ծրագիրը»: Հանրակրթության բարեփոխումների արդյունավետ իրականացման գործում առանցքային դերը պատկանում է ուսուցչին: Նախարարությունը շարունակական միջոցառումներ է ձեռնարկում մանկավարժների մասնագիտական պատրաստվածության բարելավման, նրանց հասարակական վարկի և ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացման ուղղությամբ: 12-ամյա կրթակարգի ներդրմանը համահունչ՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում շարունակաբար իրականացվել են ուսուցիչների վերապատրաստումներ՝ ուսումնական նոր ծրագրերի, չափորոշիչների, գնահատման նոր համակարգի և ուսուցման նոր մեթոդների ուղղությամբ: 2008 թվականին վերապատրաստվել են «Նախնական գինպատրաստություն», «Երգ-երաժշտություն», «Կերպարվեստ», «Ֆիզկուլտուրա», «Տեխնոլոգիա» առարկաների հանրապետության բոլոր (շուրջ 6500) ուսուցիչները: Միաժամանակ, «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում վերապատրաստվել է օտար լեզուների շուրջ 6356, մաթեմատիկայի՝ 1989, համակարգչային գրագիտության ուղղությամբ՝ մոտ 3000 ուսուցիչ: Ընդհանուր առմամբ, պետբյուջեի միջոցներով որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը կազմել է մանկավարժական համակազմի շուրջ 20%-ը: Վերջին տարիներին շարունակաբար բարձրացվել է մանկավարժների աշխատավարձը: Անցած տարի այն բարձրացվել է 21%-ով և կազմել 90.6 հազ.

դրամ, իսկ վարչական անձնակազմի աշխատավարձը՝ 136.0 հազ. դրամ: Միևնույն ժամանակ, միջոցառումներ են ձեռնարկվել լավագույն մանկավարժների խրախուսման ուղղությամբ: Կազմակերպվել և անց են կացվել ամենամյա՝ «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթները. լավագույնները ՀՀ վարչապետի և ՀՀ ԿԳ նախարարության կողմից արժանացել են պարգևների: Հանրապետության 8 մանկավարժի տրվել է ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչում, 8-ն արժանացել է «Մովսես Խորենացի» մեդալի, ևս 10 մանկավարժ պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ «Ոսկե հուշամեդալով»: Հայ առաքելական եկեղեցու համագործակցությամբ կազմակերպվել և անցկացվել է «Առարկայական լավագույն ուսուցիչ» մրցույթը, որին մասնակից 44 ուսուցիչ արժանացել է դրամական պարգևի: Շարունակվել են սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը մանկավարժական կադրերով համալրման և մանկավարժների նպատակային պատրաստման ծրագրերը: 2008 թվականի ընթացքում սահմանամերձ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի հանրակրթական դպրոցներ գործուղվել է 92 մանկավարժ և ուսուցման անհատական գրաֆիկի անցած 8 ուսանող: Մանկավարժական կադրերի 2008 թվականի նպատակային ընդունելության արդյունքում, մանկավարժական մասնագիտություններին հատկացված անվճար տեղերի շրջանակներում, բարձրագույն ուսումնական հաստատություններ է ընդունվել 56 դիմորդ: 2008 թվականին որակավորվել է հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 200 զինղեկ: Հանրապետության 400 ուսումնական հաստատություն ապահովվել է ուսումնական զենքով, իսկ 9 մարզի 510 դպրոց ստացել է հեռուստացույցներ և տեսասարքեր: Ուղղակիորեն ասիական դաստիարակության գործում ունեցած մեծ ներդրման համար ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ԿԳ նախարարության կողմից պարգևատրվել է շուրջ 60 զինղեկ (որից 7-ը՝ ԼՂՀ-ից) և 10 տնօրեն, ՀՀ մարզպետարանների կրթության վարչությունների 4 պետ և 7 մասնագետ, ՀՀ ԿԳՆ կենտրոնական ապարատի 7 աշխատակից: Միաժամանակ, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից պարգևատրվել է համակարգի 35 աշխատող, իսկ զինվորական կոչման բարձրացում է ստացել 13 զինղեկ:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների կարևոր խնդիր է կրթության որակի գնահատման և վերահսկման նոր համակարգի ներդրումը: Կրթության որակի վերահսկման միասնական նոր համակարգի համաձայն՝ 2008 թվականին անցկացվել են միջնակարգ դպրոցի պետական ավարտական և միասնական քննություններ՝ «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա», «Օտար լեզուներ» (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն) առարկաներից: Միաժամանակ, գնահատման նոր համակարգի համաձայն, կազմակերպվել ու անցկացվել է նաև հիմնական դպրոցի մաթեմատիկայի ավարտական քննությունը: Կազմվել են 2009 թվականին անցկացվելիք պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույցներ և թեստերի նմուշներ՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» և «Պատմություն» առարկաներից:

Հանրակրթության համակարգի բարեփոխումների օրենսդրական հիմքի ապահովման և կրթության բնագավառի օրենսդրության ամբողջականացման

նպատակով մշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ:

2008 թվականին տեսչական ստուգումներ են կատարվել 23 հանրակրթական, 3 նախադպրոցական և 4 նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում: Տեսչավորման արդյունքները հրապարակվել են «Կրթություն» շաբաթաթերթում և նախարարության ինտերնետային կայքում: ՀՀ կրթության պետական տեսչությանը հասցեագրվել է շուրջ 140 դիմում-բողոք, որի 2/3-ը ստացել է դրական լուծում: 12-ամյա կրթական համակարգին անցնելու կապակցությամբ առավել կարևորվում է 5-6 տարեկան երեխաների՝ դպրոցի նախապատրաստվածության հարցը: Այս առումով հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից կարևորվում է նախադպրոցական կրթությունը: Նախարարության ռազմավարությունն այս ոլորտում ուղղված է մատչելիության բարձրացմանը, համակարգի արդիականացմանն ու զարգացման նախադրյալների ստեղծմանը: 2008 թվականին ՀՀ կառավարության մարտի 13-ի թիվ 10 որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական և փորձնական ծրագիրը», որի հիմնական նպատակն է նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթության մեջ ընդգրկման ավելացմանը: 2008թվականին ծրագիրն իրականացվել է Լոռու մարզի Սպիտակի, Շիրակի մարզի Ախուրյանի, ինչպես նաև Սյունիքի մարզի Գորիսի և Կապանի տարածաշրջաններում: Ծրագրում ընդգրկվել է 30 հաստատություն և սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 740 երեխա: Ծրագրում ընդգրկված բոլոր հաստատություններում իրականացվել են կապիտալ վերանորոգման աշխատանքներ, գույքավորվել և կահավորվել են համապատասխան խմբերը, մշակվել է ծրագրամեթոդական համապատասխան գրականություն: Միաժամանակ, իրականացվել են վերապատրաստման դասընթացներ մանկավարժական և ղեկավար կադրերի, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների մասնագետների համար:

Կրթության մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովման տեսանկյունից կարևորվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթության մեջ ներգրավման և որակի բարելավման խնդիրները: Նախկինում գործող 52 հատուկ դպրոցի փոխարեն ներկայումս հանրապետությունում գործում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ 26, հակասոցիալական վարք դրսևորած երեխաների՝ 2 և օժտված երեխաների՝ 9 հատուկ դպրոց: Միաժամանակ, ընդլայնվում է ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը. ներկայումս դրանք 31-ն են: 2009-10 ուստարում նախատեսվում է այդ դպրոցների թիվն ավելացնել ևս 15-ով:

Շարունակվել է հատուկ դպրոցների ինստիտուցիոնալ բարեփոխման գործընթացը: Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների երկու հատուկ դպրոցի միավորման ճանապարհով ստեղծվել է «Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրը», որը հետագայում գործելու է որպես գիտամեթոդական կենտրոն: Շարունակվել է Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կարողությունների

հզորացումը: Այս կենտրոնի գործունեությունը կանխում է սոցիալական կարիքներով երեխաների մուտքը հատուկ դպրոցներ, ինչպես նաև նպաստում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթության կազմակերպմանը:

Հատուկ և ներառական կրթություն իրականացնող հաստատությունների համար պատրաստվել է 50 անուն աշխատանքային տետր՝ բոլոր առարկաների համար, մշակվել է 17 անուն դասագիրք:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում գործունեության հիմնական նպատակներն են եղել որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովումը:

2008 թվականին 29 նախնական մասնագիտական (արհեստագործական) և 78 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում սովորողների թիվը կազմել է համապատասխանաբար շուրջ 6500 և 28000: Միաժամանակ, միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվել են ևս 4 բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2008 թվականին կազմավորվել է մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի կազմը:

ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգը» և «Մասնագիտական կրթության բարեփոխումների 2008-2011թթ. միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը», մշակվել է «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակավորումների շրջանակի մշակման և ներդրման հայեցակարգի» նախագիծը: 2008 թվականին հիմնադրվել է Վանաձորի թիվ 1 արհեստագործական ուսումնարանը: Հաստատվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցման) ձևերով ուսուցման մասնագիտությունների ցանկը և կարգը»: Մշակվել է նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական 27 չափորոշիչ: Ոլորտում իրականացվել են շուրջ 810 միլիոն դրամի շինարարական աշխատանքներ:

Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շուրջ 700 տնօրեն, տնօրենի տեղակալ և դասախոս մասնակցել է վերապատրաստման դասընթացների:

2008 թվականին հանրապետությունում գործել է 26 բարձրագույն պետական ուսումնական հաստատություն, որից 16-ը ՀՀ ԿԳ նախարարության համակարգում : Նախարարության համակարգում գործող 16 բուհերում և դրանց մասնաձյուղերում բակալավրի, մագիստրոսի կրթական ծրագրերով և հեռակա բաժիններում սովորող ուսանողների թիվը կազմել է 88826: Ոչ պետական բուհերի թիվը 72 է, որոնցում սովորել է շուրջ 25000 ուսանող:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի հիմնական

գերակայությունը Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործումն է, որը կապահովի հանրապետության բարձրագույն կրթության ինտեգրումը Եվրոպական միասնական կրթական համակարգին: Հայաստանում Բոլոնիայի սկզբունքների իրագործումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ կառավարության հաստատած «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման 2006-2010թթ. ժամանակացույցի»:

2008 թվականին ստեղծվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամը»:

Մշակվել է բարձրագույն մասնագիտական կրթության որակավորումների ազգային շրջանակի նախագիծը, որի մշակման հիմքում դրվել է Եվրոպական Բարձրագույն Կրթական Տարածքի որակավորումների շրջանակը: Աշխատանքներ են տարվել նաև կրեդիտային համակարգի կատարելագործման ուղղությամբ:

Հրատարակվել են «Բարձրագույն կրթություն» ժողովածուի 2-3-րդ պրակները, «Ուսանողի ուղեցույց»-ի 3-րդ պրակը, «Բարձրագույն կրթության եվրոպական տարածք» տեղեկատվական գրքույկը:

Աշխատանքներ են տարվել հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման, ինչպես նաև այդ բնագավառում տեղ գտած խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ:

Սահմանված կարգով և ժամկետներում տարվա ընթացքում կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա է տրվել 76 կազմակերպության (այդ թվում՝ 9 նախադպրոցական, 40 հանրակրթական, 4 նախնական մասնագիտական (արհեսագործական), 23 տրանսպորտային միջոց վարելու ուսուցում իրականացնելու), դադարեցվել է 3 ուսումնական հաստատության լիցենզիայի գործողություն, կասեցվել է 18 կրթական գործունեության լիցենզիայի գործողություն, ստացված 83 հայտի համաձայն՝ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ուսումնական հաստատությունների լիցենզիաներին կից ցանկերում:

Հայաստանի կրթության համակարգի ինտեգրմանը և զարգացմանն էապես նպաստում են սովորողների և դասախոսների փոխանակման ծրագրերը: 2008թ.

միջպետական համաձայնագրերի շրջանակներում նախարարությունը բուհական և հետբուհական կրթություն ստանալու նպատակով արտասահմանյան 9 երկիր է գործուղել Հայաստանի Հանրապետության 126 քաղաքացի: Ներկայումս

միջպետական համաձայնագրերի շրջանակներում ՀՀ բուհերում ուսանում է շուրջ 2200 օտարերկրյա քաղաքացի, որից 90-ը՝ անվճար ուսուցման համակարգում:

Հանրապետությունում լեզվական միասնական քաղաքականության իրականացման, գրական հայերենի կանոնարկման և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրա լիակատար գործածության ապահովման նպատակով լեզվի պետական տեսչությունը իրականացրել է մի շարք տեսչական շրջայցեր: 136 ստուգման և ուսումնասիրության արդյունքում վարչական դատարան է ներկայացվել 23 գործ:

Գիտության ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է գիտության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումներին, գիտության ֆինանսավորման ծավալների ավելացմանը, գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, գիտական ներուժի վերարտադրությանը, գիտության երիտասարդացման միտվածությանը և գիտության ու

տեխնոլոգիաների գերակա ուղղությունների ձևավորմանը:

2008 թվականին պետական բյուջեից ֆինանսավորվել է 890 գիտական ծրագիր և թեմա՝ 6376904.6 հազ. դրամ ծավալով, մասնավորապես.

•գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման համար հատկացվել է 3977738.6 հազ. դրամ, այդ թվում՝ հիմնարար հետազոտությունների թվով 85 ծրագրի համար՝ 2063449.0 հազ. դրամ, ենթակառուցվածքի պահպանման թվով 86 ծրագրի համար՝ 1648593.6 հազ. դրամ, ազգային արժեք ներկայացնող թվով 3 ծրագրի համար՝ 164772.6 հազ. դրամ և գիտական կադրերի պատրաստման համար՝ 100923.4 հազ. դրամ,

•գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում՝ 710 թեմա, 1455866.0 հազ.դրամ,

•գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորում՝ 6 ծրագիր, 943300.0 հազ. դրամ:

Հավաքագրվել և հստակեցվել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող աշխատողների տվյալները՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով հավելվածարների տրամադրման համար /710 գիտությունների դոկտոր և 2339 գիտությունների թեկնածու/:

Իրականացվել է գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող շուրջ 100 կազմակերպության անձնագրավորում և անձնագրային տվյալների վերլուծություն:

Մշակվել է «Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N1555-Ն որոշմամբ: Մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքները և չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N1558-Ն որոշմամբ:

Երկրաբանության բնագավառում կրթական և հետազոտական աշխատանքների զուգորդման նպատակով ԵՊՀ-ի նախածեռնության հիման վրա մշակվել է «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը «Երևանի պետական համալսարանի երկրաբանական հետազոտությունների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հիմնադրելու թույլտվություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N1570-Ն որոշմամբ:

Մի խումբ գիտնականների ներկայացրած առաջարկության հիման վրա մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում Աստղագիտության օրը նշելու մասին» որոշման նախագիծը: Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը» և ՀՀ կառավարության «Գիտության հիմնադրամի մասին» որոշման նախագիծը:

Մշակվել, ՀՀ կառավարության առաջարկությամբ լրամշակվել և ներկայումս քննարկումների փուլում է գտնվում գիտական և գիտատեխնիկական

գործունեության ֆինանսավորման և անկախ փորձագիտական համակարգի ստեղծման ու գործունեության մասին թվով 6 կարգ: Նախատեսվում է 2009 թվականի մարտին սահմանված կարգով դրանք ներկայացնել ՀՀ կառավարություն:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարության և Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգի մշակման և 2009 թվականին սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու նպատակով ստեղծվել են համապատասխան աշխատանքային հանձնաժողովներ՝ դրանցում ընդգրկելով նաև շահագրգիռ նախարարությունների, գիտական և գիտակրթական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ՀՀ կառավարության «Գիտատեղեկատվական-վերլուծական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» որոշման նախագիծը: 2008թ. գիտական աստիճանի վկայագիր տրվել են ՀՀ մասնագիտական խորհուրդներում ատենախոսություն պաշտպանած 566 (այդ թվում՝ 46-ը գիտության դոկտորի) գիտնականի, իսկ օտարերկրյա պետություններում ստացած գիտական աստիճանի համապատասխանեցման հավաստագիր՝ 27 գիտնականի (այդ թվում՝ 1 դոկտորի): Գիտական կոչման վկայագիր տրվել է 283 (այդ թվում՝ 50-ը պրոֆեսորի և 233 դոցենտի) գիտնականի:

Կրթության ոլորտում մեծ կարևորություն ունի նաև համագործակցությունը արտերկրում՝ հայապահպանության խնդրի տեսանկյունից: Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը կոչված է համակողմանիորեն սատարելու սփյուռքահայ կրթօջախների գործունեությանը, ապահովելու արդյունավետ համագործակցություն՝ գիտակրթական ոլորտում դրանով իսկ պայմաններ ձևավորելով համահայկական ներուժի համախմբման և ռացիոնալ օգտագործման նպատակային խնդիրների լուծման համար: Իրականացվել է սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստում, որին մասնակցել է 19 ուսուցիչ՝ 13 երկրից: 2008 թվականին կազմակերպվել է Համահայկական կրթական երրորդ խորհրդաժողովը, որին մասնակցել է 150 ուսուցիչ և կրթական գործի պատասխանատու՝ 31 երկրից:

2008 թվականին ՀՀ պետական բուհերում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և ասպիրանտուրայում ուսանելու համար ընդունվել է շուրջ 500 սփյուռքահայ: Ներկայումս հանրապետության մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում է շուրջ 3200 սփյուռքահայ երիտասարդ:

Շարունակվել է արտերկրի հայկական կրթօջախներին դասագրքեր և ուսումնական նյութեր տրամադրելու գործընթացը. մասնավորապես, 27 երկրի հայկական համայնքների դպրոցներին տրամադրվել է 24000 դասագիրք:

Վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Այսպես, 2006 թվականին պետական բյուջեով նախատեսված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 2.53%-ը, 2007 թվականին՝ 2.84%, 2008 թվականին՝ 2.94%:

Կրթության տարբեր մակարդակների պետական միջոցների բաշխման

կառուցվածքը համեմատելի է ԱՀԶԿ երկրների ցուցանիշներին, 2007 թվականին կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների շուրջ 87.1%-ն ուղղվել է հանրակրթության ոլորտին, իսկ 10.1%-ը՝ մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը, 2008 թվականին համապատասխանաբար՝ 82.1% և 14.0%:

Նախարարությունը կարևորել է գործունեության թափանցիկության, տեղեկատվության մատչելիության ապահովումը և քաղաքացիական հասարակության մասնակցությունը: Նախարարությունում շարունակել է գործել «Թեժ գիծ» հեռախոսակապը, որի միջոցով քաղաքացիներին հուզող հարցերին տրվել են պարզաբանումներ: Բարձրացված հարցերը հրապարակվել են «Կրթություն» շաբաթաթերթում: 2008 թ. նախարարի կողմից կատարվել է քաղաքացիների 7 ընդունելություն, որոնց ընթացքում նախարարն ընդունել է 190 քաղաքացի: Փոխնախարարների մոտ տեղի ունեցած 13 ընդունելության ընթացքում պարզաբանումներ են տրվել 50 քաղաքացու: Պարբերաբար կազմակերպվել են մամուլի ասուլիսներ ինչպես նախարարության տարբեր ստորաբաժանումների գործունեության, այնպես էլ ոլորտում իրականացվող գործընթացների և առկա հիմնախնդիրների վերաբերյալ: 2008 թվականին արդյունավետ գործել է նախարարության ինտերնետային կայքը, որտեղ զետեղված են ոլորտին վերաբերող իրավական փաստաթղթեր, իրականացվող գործընթացներին առնչվող տեղեկատվություն: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից կազմակերպված տեղեկատվության ազատության մրցանակաբաշխության ժամանակ նախարարության կայքը ճանաչվել է 2008թ.-ի տեղեկության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայքը: Տարածվել են հանրության լայն շերտերին հետաքրքրող տեղեկություններ՝ մամուլի հաղորդագրությունների, նախարարության ինտերնետային կայքի և ՋԼՄ-ներում առկա թեմատիկ հաղորդաշարերի միջոցով: ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կրթական համալիր էջը /www.armedu.am/ ինտերնետային կայքերի միջև էլ. բովանդակության մրցույթի արդյունքում ճանաչվել է լավագույնը՝ էլ. ուսուցում անվանակարգում: 2008 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրով նախատեսված 16 միջոցառումից կատարվել է 13-ը և 3-ը՝ հետաձգվել: